



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՋԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ջետազոտության թեման՝

ՉԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ջետազոտող ուսուցիչ՝ Մարինե Չերկազի Աղաջանյան

.....

Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի թիվ 1 հիմն. դպրոց

.....

Մենթոր ուսուցիչ՝ Ա. Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
Մաս 1. ԻՆՉ Է ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ.....	5
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ:.....	8
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	13
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.....	14
Գրականության ցանկ.....	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դար: Ապրելով այս դարաշրջանում անհնար է պատկերացնել ժամանակակից մարդու մոդելը առանց ժամանակակից տեխնոլոգիաներից մեկի՝ համակարգչի: Յուրաքանչյուր օր ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր իրենց օրը սկսում են համակարգչին ասելով «Բարի լույս» և վերջացնում համակարգչին ասելով «Բարի գիշեր»: Համակարգիչը դարձել է մեր կյանքի ճանապարհի ուղեկից ընկեր և պարտադիր չէ, որ նրա օգտագործումը օրական լինի ավելի քան 5-6 ժամ, որ դիտարկվի որպես համակարգչից կախվածություն, քանի որ ներկայումս տեխնոֆիկացված մեր հասարակության մեջ շատ աշխատանքներ հնարավոր է կատարել միայն համակարգչի միջոցով, և այդ աշխատանքով զբաղվող մարդկանց էլ համարել համակարգչային կախվածություն ունեցողներ:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող համեմատական փոփոխությունները սերտորեն առնչվում են տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ տեղեկատվությունը դարձնելով մարդու կյանքի անբաժանելի մաս: Համացանցը այսօր ոչ միայն կապ և տեղեկատվություն է տրամադրում, այլև այնտեղ արձածվում և պարզաբանվում են սոցիալ-մշակույթային բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը, հաղորդում է դրանց նոր բովանդակություն: Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, ինչպես նաև ողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ: Դրանք՝ հակառակ մեր ակնկալիքների չեզոք միջոցներ չեն: Դրանք են թելադրում կյանքի բնույթն ու ուղղորդում ճանապարհը: Ներկա դարաշրջանում մարդ արարածը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Քաղաքական, տնտեսական, գեղագիտական, հոգեբանական, բարոյական, կրթական, հասարակական տեսանկյունից տեղեկատվական տեխնոլոգիաների թողած ազդեցության հետևանքները խորն են այնքանով, որ մարդային կյանքի և հոգու ոչ մի անկյուն զերծ չի մնացել այդ ազդեցությունից: Այսօր ակնհայտ է, որ քաղաքակրթության հետագա զարգացումը կախված է նրանից, թե ինչպե՞ս կկառուցվեն մեդիայի և մարդու, մեդիայի և մշակույթի, մեդիայի և կրթության հարաբերությունները: Միայն համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր լուծել այդ խնդիրները:

Այսօր ժամանակները փոխել են ամեն ինչ և իրենց կնիքն անգամ մանկության ու պատանեկության վրա են թողել, սրանք կյանքի կարևոր և հիանալի փուլեր են, որոնք մեզնից յուրաքանչյուրը ուրախությամբ և մեծ սիրով է հիշում, իսկ իսկական մանկությունը լի է ազնվությամբ, մաքրությամբ, պարզությամբ, միամտությամբ, անհոգ է,

ուրախ, առանց տանջանքների և կամակորոթյունների և հենց մանուկներն ունեն աշխարհում ամենաթանկ բանը՝ մաքուր հոգի ու միտք: Նախկին բակային և մանկական խաղերին փոխարինելու են եկել համակարգիչը ու պլանշետը, համացանցը... Հետաքրքրություններն այսօր փոխվել են և ոչ միայն դեպի դրականը: Այժմ երեխաներին հետաքրքրում են համակարգչային խաղերն ու շփումները սոցիալական կայքերում: 21-րդ դարում մանկություն հասկացությունը, մեղմ ասած, այլ կերպ է ընկալվում: Այժմ երեխաների մեծ մասը իր մանկությունն անցկացնում է համակարգիչների առաջ: Տեղեկատվական դարաշրջանի երեխաները ծնվում են բազմաբնույթ տեղեկատվությամբ ծանրաբեռնված միջավայրում, որը սփռում են տարբեր տեսակի տեղեկատվական տեխնոլոգիաները: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունները սերտորեն առնչվում են տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Հետևաբար կրթությունը որպես մշակույթի համակարգում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն չի կարող հեռու մնալ այս գործընթացից:

Մաս 1. ԻՆՉ Ե ԶԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Համակարգչային կախվածությունն այսօր մասնագետների կողմից որակվում է որպես վարքային խանգարում, որը զգալի տարածում է գտել երեխաների, մասնավորապես դեռահասների, ինչու չէ՞ նաև մեծահասակների շրջանում:

Որպիսի ցանկացած երեխայի, ով օգտվում է համակարգչից չափտակավորեն համակարգչային կախվածություն ունեցող երեխա, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ ասել է համակարգչային կախվածություն:

Համակարգչային կախվածություն ունեցող երեխան չափազանց բուռն է ընդունում համակարգչային խաղը դադարեցնելու մասին խնդրանքը կամ պահանջը՝ նույնիսկ եթե մինչև համակարգչի առջև նստելը երեխայի և ծնողի միջև եղել է հստակ պայմանավորվածություն և որոշվել է կոնկրետ ժամանակահատված, թե որքան ժամանակ կարող է երեխան խաղալ համակարգչով:



Ի տարբերություն համակարգչային կախվածություն չունեցող երեխաների այս երեխաները համակարգչային խաղերից և համացանցից բացի այլ գործունեությամբ զբաղվելու ցանկություն չունեն, նրանք հիմնականում չեն ունենում այլ հետաքրքրություններ, իրենց օրը սկսվում և ավարտվում է համակարգչային խաղերով: Նրանք չեն ցանկանում ռեալ կյանքում, օրինակ՝ բակում, ֆուտբոլ խաղալ իրենց հասակակիցների հետ, չեն ցանկանում ընտանիքի հետ միասին որևէ ժամանցի վայր գնալ, երբեմն նույնիսկ կարող են մոռանալ սնվելու մասին:

Իսկ երբ երեխայի մոտ չկա համակարգչային կախվածություն, նա համակարգչից բացի ունի նաև այլ հետաքրքրություններ, այլ զբաղմունքներ՝ սիրով հաճախում է տարբեր խմբակների, համեմատաբար հեշտ է ավարտում համակարգչային խաղը, եթե ավարտվել է համակարգչով խաղալու նախօրոք պայմանավորված ժամանակահատվածը:

Համակարգչային կախվածությունն ունեցող երեխաները դժվարությամբ են ընդունում իրական կյանքում առկա կանոնները: Նրանք այդ կանոններին փորձում են հակադրվել՝ կամակորություններ անելով, լացելով, ագրեսիվ գործողություններով:

Չնայած, որ ցանկացած խաղ ունի կանոններ, այնուամենայնիվ համակարգչային խաղը կարող է հանել որոշ սահմանափակումներ՝ ի տարբերություն իրական կյանքի: Վիրտուալ իրականության մեջ երեխան կարող է ունենալ անմահության զգացում, քանի որ այդ տիրույթում գործած սխալները կարելի է ուղղել:

Համակարգչային խաղերը կարող են լինել նաև ագրեսիվ բնույթի: Խոսքն այնպիսի խաղերի մասին է, որտեղ հերոսը, ում հետ խաղի մեջ իրեն սկսում է նույնականացնել երեխան, պետք է կատարի որոշակի ագրեսիվ գործողություններ՝ հարվածի, ատրճանակի կամ այլ զենքի օգնությամբ կրակի վիրտուալ հակառակորդի վրա:

Այսպիսի խաղերում դրսևորվող ագրեսիայի հետևանքով երեխաներն աստիճանաբար, ժամանակի ընթացքում, կարող են սկսել ընդունել վիրտուալ աշխարհը որպես առաջնային և առօրյա կենսական խնդիրների լուծումները փնտրել իրականությունից կտրված՝ վիրտուալ տիրույթում:

Ըստ որոշ հետազոտությունների՝ երեխաներն այսօր համակարգչի առջև անցկացնում են օրական միջինը երեքից մինչև տասը ժամ, ինչը բնականաբար անհետևանք չի կարող լինել: Երեխաները, ովքեր երկար ժամանակ են անցկացնում վիրտուալ տիրույթում, կորցնում են իրական շփումներ ունենալու հնարավորությունը, ինչի հետևանքով բավարար չափով չեն զարգանում նրանց սոցիալական հմտությունները:

Նման երեխաները կարող են մեկուսանալ, ունենալ ցածր ինքնագնահատական, բարձր տագնապայնություն, ընդհանուր թուլություն, հոգնածություն, քնի խանգարումներ: Բացասական հետևանքները կարող են իրենց հետքը թողնել նաև հոգեկան գործընթացների վրա (մասնավորապես վատանում է երեխայի հիշողությունը, դպրոցում դասերի ժամանակ դժվարությամբ են կենտրոնացնում ուշադրությունը, հասկանում ու դատողություններ անում), հոգեվիճակների, անձնային ոլորտում:

Ինֆորմացիոն աշխարհն իր բոլոր դրսևորումներով ազդում է մարդու արժեքային համակարգի, արժեքային դիրքորոշումների, նպատակների, երազանքների ու իդեալների ձևավորման, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա: Բուռն երևակայության շրջան համարվող մանկական տարիքում համակարգչային խաղերն իրենց գունավոր աշխարհներով, հերոսներով, հաղթանակներով ու պարտություններով հետաքրքիր վիրտուալ մրցակիցներով կարող են ամբողջովին կլանել երեխային:

Երեխաները համակարգչից կախվածությունն են ձեռք բերում, քանի որ տեղյակ չեն դրա բացասական հետևանքների մասին:


Նոր տեխնոլոգիաների պատճառով երեխաների շրջանում ի հայտ եկող խնդիրները պետք է դիտարկվեն պրոակտիվ եղանակով, այլ ոչ թե սպասելով փաստերի և փորձել հաղթահարել հիմնախնդիրները, որոնք արդեն իսկ ի հայտ են եկել: Համակարգչային տեխնոլոգիաների զարգացումը և ներթափանցումը մարդկային գործունեության բոլոր ասպարեզներ, արդի հասարակությունը բնորոշող մի առանձնահատկություն է: Բոլոր տեխնոլոգիաները, որոնք կստեղծվեն ապագայում, կկոչվեն երրորդ հազարամյակի կամ 21-րդ դարի տեխնոլոգիաներ:

21-րդ դարը բեկումնային կլինի մարդկության զարգացման համար: Հետևաբար, մեր նշված խնդիրները պահանջում են բոլորի ուշադրությունը՝ փիլիսոփաների, տնտեսագետների, հոգեբանների, սոցիոլոգների, քաղաքական գործիչների և իհարկե մանկավարժների:

Մաս 2. ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ, ԵԹԵ ԵՐԵՒԱՅԻ ՄՈՏ ԱՌԿԱ Է

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ: Հետազոտության արդյունքները

Ըստ Բելավինի, Մոսկալենկոյի և այլ տեսաբանների՝ համակարգչային ախտանշանը ի հայտ է գալիս, երբ երեխան ավելի շատ ժամանակ է տրամադրում համակարգչին, այդ ազդեցությունը անմիջականորեն բացասական է ազդում նրա կրթական գործընթացի վրա՝ առաջ բերելով նաև հոգեբանական և ֆիզիկական հապաղումներ: Գիտնականների մեծ մասը համակարգչային կախվածությունը կրտսեր դպրոցական տարիքի հետ են կապում՝ ընդգծելով այն հանգամանքները, որ այդ տարիքում են ձևավորվում մի շարք հոգեբանական գործառույթներ: Հետազոտողներն ընդգծում են, որ համակարգչային ազդեցության բացասական հետևանքներն հաղթահարելի են:



Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ցույց տալ ուսումնական գործունեության ուղիները: Պետք է սովորեցնել երեխային աշխատել նաև տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել:

Ակադեմիկոս Ա.Պ.Սեմյոնովի հայտարարությունները, թե «Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում», պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում:

Համակարգչային իրականության ղեկավարման վահանակը գտնվում է երեխայի ձեռքերում: Նա կարող է ցանկացած պահին հանդես գալ ցանկալի կերպարի մեջ՝ դադարեցնելով կամ շարունակելով ապրել այդ աշխարհում:

Այսօրվա նպատակների իրականացման համար դասվարի աշխատանքային գործունեության մեջ տեղեկատվական-հաշվողական տեխնոլոգիաների կիրառումը անհրաժեշտություն է դառնում:

Համակարգչային կախվածությունն ունեցող երեխայի մոտ խնդրի էլ ավելի խորացումից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանափակել երեխայի համակարգչային գործունեությունը այն փոխարինելով իրական շփումով, ընտանեկան ժամանցով, սպորտային կամ այլ խաղերով, տարբեր խմբակներ հաճախելով և այլն:

Այո՛, համակարգչային ազդեցության բացասական հետևանքները հաղթահարելի են, և այդ գործում հատկապես մեծ դերակատարում ունեն մեր աշակերտների ծնողները: Դպրոցում, որտեղ աշխատում եմ որպես դասվար, շատ լավ համագործակցում եմ ծնողների հետ, բացահայտելով համակարգչային կախվածությունն ունեցող աշակերտների խնդիրները և փորձում գտնել դրանց հաղթահարման ճանապարհները:

Մենք գտնում ենք, որ առաջին հերթին թե՛ ծնողները, թե՛ աշակերտները, թե՛ մանկավարժները պետք է լինեն մեղիա գրագետ: Մենք հաճախ կազմակերպում ենք ժողովներ, միջոցառումներ, զրույցներ՝ համապատասխան թեմաներով:

Ինձ՝ որպես դասվարի շատ մտահոգեց այն հանգամանքը, երբ ես զրույց կազմակերպեցի իմ 4-րդ դասարանի աշակերտների հետ (15 աղջիկ, 15 տղա) և հասկացա, որ իմ դասարանում սովորող աշակերտներից, հատկապես տղաներից, տարված են համակարգչային խաղերով: Սկսեցի հետազոտություն անցկացնել, պարզելու համար դրա նախադրյալները:

Նախնական փուլում հարց ու պատասխանի միջոցով, զգուշորեն փորձեցի բացահայտել այն խնդիրները, որոնք առկա են իմ աշակերտների մոտ: Հասկացա, որ նաև պետք է զրուցեմ նրանց ծնողների հետ և մեր համատեղ ջանքերով փորձենք երեխաներին զերծ պահել համակարգչով տարվելու սովորությունից: Հրավիրեցի ծնողական ժողով, որի նպատակն էր ծնողների հետ զրուցել այդ թեմայի շուրջ: Ծնողները նույնպես մտահոգված էին և մեծ ոգևորությամբ սկսեցին աջակցել ինձ:

Կազմակերպեցի տեսանյութերի դիտումներ և քննարկումներ «Օգտակար ռեսուրսներ մեղիա գրագիտության մասին», «Մեղիան և երեխաները», «Խաղեր, որոնք օգնում են դառնալ մեղիա գրագետ» թեմաներով:

Ծնողներին, նման խնդիրներից խուսափելու համար, խորհուրդ տվեցի լինել զգոն և առաջնահերթությունը տալ սեփական երեխաներին, այլ ոչ թե առօրյա կենցաղային հոգսերին: Քանի որ տարվելով առօրյա հոգսերով, ինչու՞ չէ նաև սոցիալական ցանցերով՝ հաճախ ծնողները կարող են կորցնել սեփական երեխայի հետ թանկարժեք ակնթարթները, վայելելու ի վերուստ տրված մեծագույն պարգևն ու հաճույքը:

Ծնողների հետ աշխատանքների ընթացքում երեխաների համակարգչային կախվածությունից զերծ պահելու նպատակով խորհուրդ եմ տվել մասնավորապես՝


- սահմանափակել երեխայի համակարգչային գործունեությունը՝ միաժամանակ երեխայի հետաքրքրությունները ապահովելով այլ՝ ոչ պակաս հետաքրքիր օֆլայն գործունեությամբ:
- երեխայի հետ միասին կազմակերպել ընտանեկան ժամանց
- միասին տարբեր խաղեր խաղալ, թե՛ տանը, թե՛ բնության գրկում, ինչը կնպաստի ծնող-երեխա հուզական կապի ամրապնդմանը:

Նկատել ենք, որ համակարգչային կախվածություն ունենալու նախադրյալների թվում են հետևյալ գործոնները.

- երեխաների նկատմամբ ծնողների անտարբերությունը, ոչ ճիշտ դաստիարակությունը, անհետևողականությունը, չափազանց խստությունը և այլն
- ծնող-երեխա հարաբերությունների թույլ կապը
- ազատ ժամանակի սխալ կազմակերպումը
- համացանցի գործունեության թույլ վերահսկողությունը
- ծնողների զբաղվածությունը:

Չետազայում այս գրույցները ունեցան շարունակական բնույթ, հանդիպում էի աշակերտների ծնողների, ինսամակալների հետ և փորձում էինք միասին հասկանալ երեխաների հետաքրքրությունները, նրանց ազատ ժամանակի տնօրինման ճիշտ ուղիները:

Աշխատել ենք ունենալ ուսուցման կազմակերպման այլ եղանակներ, որպիսի նրանց մոտ ավելի ուշ ձևավորվի համակարգչային կախվածություն: Նրանց հաճախ համակարգչով հայտորոշիչ և ամփոփիչ թեստեր ենք ուղարկել՝ աշխատելու համար, լրագրողական, փնտրողական հանձնարարություններ ենք տվել, նշելով ճիշտ և գրագետ աղբյուրները: Փորձել ենք ետ պահել նրանց՝ համակարգչին ավելի շատ ժամանակ տրամադրելու հանգամանքից: Երեխաներին խորհուրդ ենք տվել ավելի շատ նախընտրել զբաղվել բակային գործունեությամբ՝ խաղեր խաղալ, պարտեզա-պուրակային գործունեությամբ զբաղվել, կենդանիների, թռչունների խնամքով, ավելի շատ լինել բնության գրկում, ներգրավվել սպորտային և երաժշտական խմբակներում, կազմակերպել ենք էքսկուրսիաներ: Նրանց համար կազմակերպել ենք դասղեկի ժամ՝ «Ես և համակարգիչը» թեմայով: Դիտել ենք տեսահոլովակ՝ համակարգչային խաղերի մասին, որից հետո քննարկել թեման: Երեխաները ազնվորեն պատմել են իրենց համակարգչային գործունեության մասին, իսկ ոմանք խոստովանել, որ իսկապես իրենք շատ են տարված համացանցով և դա իրենց դուր է գալիս՝ հետաքրքիր է: Փորձել ենք երեխաների հետ առանձնացնել տեղեկատվական տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունը Վենսի դիագրամի մեթոդով:



Բացասական

- Համակարգչային կախվածություն
- Տեսողության վատացում
- Դյուրագրգռություն
- Հոգեբանական և ֆիզիկական հապաղումներ
- Թույլ ֆիզիկական և հոգեկան առողջություն
- Մեկուսացում
- Բարձր տազնապայտություն
- Ցածր ինքնագնահատական
- Իրական շփումների պակաս
- Զնի խանգարումներ
- Գիրք կարդալու պակաս
- Կրթական մակարդակի նվազում
- Սոցիալական հմտությունների անբավարարվածություն

Դրական

- Գիտելիքների համալրում
- Օգտակար տեղեկատվության աղբյուր
- Օգնում են հուզական լիցքաթափմանը
- Գրավոր խոսքի ճկունություն
- Հիշողության զարգացում
- Տրամաբանության զարգացում
- Ստեղծագործական մտածողության զարգացում
- Մենսոմոտորիկայի բարելավում

- Համակարգչից օգտվելու ունակություն
- օգտակար տեղեկատվության ստացում
- ստեղծագործական մտքի զարգացում
- Նոր նեխնուղոգիաների տիրապետում

Այսպիսով աշակերտները հասկացան, որ սահմանված ժամանակից ավելի շատ տրամադրել համակարգչին և համակարգչային խաղերին վտանգավոր է: Համակարգչի դիմաց անցկացրած ժամանակն աստիճանաբար սկսում է ազդել ուսուցման, ուսումնական առաջադիմության, կենտրոնացվածության վրա: Համակարգչային կախվածությունը հանգեցնում է հոգեբանական և ֆիզիկական հապաղումների, նրանք կունենան թույլ ֆիզիկական և հոգեկան առողջություն:

Արդյունքում՝ ըստ իմ կատարած հետզատության հասկացա, որ համակարգչային կախվածության գլխավոր նախադրյալը ընտանիքն է, մասնավորապես ծնողների անտարբերությունը երեխայի նկատմամբ: Համակարգչային կախվածության հետևանքով վտանգվում է երեխայի առողջությունը օրգանիզմի դիմադրողականությունը, առաջանում են տեսողական խանգարումներ, գլխացավեր, ողնաշարի, դաստակների ցավեր, հոգնածություն, անքնություն: Ծնողների անտարբերությունը երեխայի կրթության և դաստիարակության ոչ ճիշտ վերահսկումը առաջ է բերում համակարգչային կախվածություն:

ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փոխակերպված միջավայրում, որտեղ երեխաներին մատչելի են նորանոր ծառայություններ ու գործառույթներ՝ նրանք մեծանում են իրենց ծնողներից տարբեր ձևերով: Սա պատճառ է դառնում խզումների մեծահասակների ու երեխաների՝ ծնողների ու զավակների, ուսուցիչների ու սովորողների, այսօրվա սերունդների միջև, որը հանգեցնում է հասարակական մեծ փոփոխությունների: Տեղեկատվության հեղեղված հասարակության մեջ տեխնոլոգիայի և մշակույթի միջև հարաբերությունները դուրս են եկել մեծահասակ սերնդի հսկողության շրջանակից: Արդեն ակներև է, որ տեղեկատվական դարաշրջանի առավել նշանակալից փոփոխությունները կկատարվեն հասարակական ոլորտում, կունենան ընկերային բնույթ և դրանց արդյունքները արդեն առաջանում են այսօրվա երեխաների փորձառության մեջ, ինչպես և պատմության ընթացքում կատարված ուրիշ մեծ փոփոխությունների ժամանակ՝ երեխաները կլինեն գալիք տարիների շահառուները կամ զոհերը: Շատ բան, այդ թվում նրանց դժվարությունները և պատեհությունները կախված կլինեն նոր միջավայրին հարմարվելու նրանց կարողությունից: Եթե մենք այսօր ի վիճակի լինենք հասկանալու այս փոփոխությունների բնույթն ու միտումները, գուցե և կարողանանք կայացնել մեր երեխայի ապագայի հետ կապված լավագույն վճիռները: Ժամանակակից տեխնոլոգիաների ճնշման տակ կատարվող մանկան հոգեբանության փոփոխությունները առաջիկայում կարող են հանգեցնել լուրջ հետևանքների թե՛ երեխաների, թե՛ նրանց ծնողների համար: Այդ խնդրով անհրաժեշտ է զբաղվել այսօր, հոգուտ ապագայի, հոգուտ երեխայի: Տեղեկատվական-հաշվողական տեխնոլոգիաների օգտագործման շառավիղը բավական լայն է: Իհարկե աշխատելով կրտսեր դպրոցականների հետ անհրաժեշտ է հիշել պատվիրանը «Մի վնասիր»:

Ուսումնական գորընթացի կազմակերպումը առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող իրացման համար և նպաստի սովորողի հոգևոր զարգացմանը: Հետևաբար տեղեկատվական-հաշվողական տեխնոլոգիաներն պետք է կատարեն որոշակի կրթական գործառույթ, օգնել երեխային կողմնորոշվել տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել, և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը:

«Շատ իմաստության հետ, շատ տրտմություն կա, և գիտություն ավելացնողը վիշտ էլ է ավելացնում»:

(Ժողովող 1.18)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կատարած հետազոտության արդյունքների մշակումից հետո, փորձեմ կատարել մի քանի առաջարկներ, երեխաներին համակարգչային կախվածությունից և դրա բացասական ազդեցությունից զերծ պահելու նպատակով, ինչի համար անհրաժեշտ է իրականացնել՝

- ծնող-երեխաների հարաբերությունների ամրապնդում
- ապահովել երեխային ազատ ժամանցով՝ մասնավորապես պարապմունքներով, սպորտային, պարային, երաժշտական, բակային խաղեր և այլն
- հետևողական լինել երեխայի զբաղվածությանը, ժամանցի կազմակերպմանը
- ուշադրություն դարձնել երեխայի հաղորդակցման վրա, որքանով է նա վերբալ, ունի ընկերներ թե ոչ, կարողանում է նրանց հետ հաղորդակցվել, համերաշխության մթնոլորտում խաղեր խաղալ
- ուշադրություն դարձնել նրա հոգեկան և ֆիզիոլոգիական զարգացման վրա: Այդ տարիքում դեռևս ամբողջությամբ զարգացած չէ նրա կմախքը, հատկապես ողնաշարը և անընդհատ նստած վիճակում գտվելով նրա մոտ առաջանում են առողջական խնդիրներ:
- հետևել երեխայի ինքնուրույնությանը, ապահովել նրա ազատ գործունեությունը, քանի որ հենց այդ տարիքում է ձևավորվում անձի «Ես»-ը, ինքնագիտակցությունը, ամեն ինչ կարողանալու զգացողությունը:
- Լինել մեղիա գրագետ:

Գրականության ցանկ

1. Աստվածաշունչ մատյան:
2. Վ.Մանտուլենկո «Մեդիագրագիտությունը ժամանակակից աշխարհում»:
3. Ս.Խուդոյան «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները», Երևան, 2004թ.:
4. Балабин У.Г. «Восприятие ребенком компьютера и компьютерных игр», 2001г.:
5. Москоленко В.Д. «Зависимость. семейная болезнь», 2003г.:
6. Օ.Պողոսյան «համակարգչային կախվածությունը երեխաների և դեռահասների շրջանում», Երևան, 2019թ.:
7. <http://youtube.com/watch?v=d9EufIompiM&feature=share> (Օգտակար ռեսուրսներ մեդիագրագիտության մասին):
8. <http://youtube.com/watch?v=JFBvTDT-PZY&feature=share> (Մեդիան և երեխաները. մաս 1-ին):
9. <http://youtube.com/watch?v=pvF6MWYg6z0&feature=share> (Խաղեր, որոնք օգնում են դառնալ մեդիագրագետ):